



## ԿՈՆԴԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆԻ ԵՐԵՔ ԱՆԱՐԺԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ  
ԿԱՐԳԱԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԵՂՐԴ ՆԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԳՐԻՍՈՋԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱԾՐ  
ՏԵԱՌԻ ԵՒ ԿԱՄՈՒՔԻ ԱԶԴԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԳԵՏ ԵՒ  
ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՅ, ԵԱՅՐԱԳՈՅՆ  
ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՆԱՐ ԱՐՈՌՈՅ  
ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ  
ՄՐԲՈՅ ԿԱՐՈՒՂԻԿԵ ԵԶՄԻԱԽՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՏԵՂԱՊԱՀԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Տ.  
ԳԵՂՐԴԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐՄԱՆԵԱՆ ԵՒ ՊՈԼՍԱՅ ՍԻՐԵՑԵԱԼ ՀՕՏԻ  
ՄԵՐՈՒՄ, ՀԱՐՄԱՆԱՅ ՄԱՅՐ ԱՐՈՌՈՅ ՄՐԲՈՅ ԷԶՄԻԱԽՆԻ, ՈՂՋՈՅՆ  
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՃՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՓԵՏԱԿԱՆ

Կոստանդնուպոլիսի բմբոստ հոգևորականների խոռվարար ընթացքը Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգերի դեմ, և դրա հետևանքով ստեղծված պոլսահայ համայնքի հոգումնալից վիճակը ծանր տպավորություն է բողել Մեզ վերա և, ամիսներ ի վեր, Մեր մտանոգործյան առարկան է եղել և է ցայսօց:

Պատրիարքական Տեղապահի գեկուցագրերը, մամուլի փաստական հաղորդագրությունները, այլև ըմբռատների հնարին բնով կազմած և իրենց գործելու կերպին հակասող գրությունները Մեզ բերել էին այն համոզման, որ Պատրիարքական Տեղապահի կողմից հինգ հոգևորականների նկատմամբ արձակած կախակայման վեճոր իրավացի է, ուստի և Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, Մեր հանուրյամբ, հաստատեց այն ցեղորդ անօրինություն:

Պոլսի Պատրիարքական Տեղապահի կողմից կախակայված հոգևորականները հետեւալներն են՝ Հմայուկ Ս. Կարդապետ Պախրիարյան, Զարմայը Ս. Վարդապետ Կեղյուրյան, Թովման Ավագ Քահանա Շիկաներ, Արքահան Ավագ Քահանա Էպեյան և Սերովիք Ավագ Քահանա Պարմայան:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդի որոշումը, որ հաղորդվեցավ Ամենապահի Տեղապահին և հրատարակեցավ մամուլում հետեւալն է.  
«Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, նկատի առնելով, ոչ կա-

խակայալ մինք նոգեւրականները, ենելով օրինականուրյան սահմաններից, անսաստել են Պետուրյունից նաևաշլած եկեղեցական կանոնագրին, արքամարին են Հոգեոր Բարձրագույն Խշխանուրյունից նաևաշլած Պատրիարքական Խշխանուրյունը, մեղանչել են եկեղեցական կարգապահուրյան դեմ, և, առանց բույլտվուրյուն ստանալու Հոգեոր Բարձր Խշխանուրյունից և Վեհափառ Հայրապետից, խորհին են տապալել գրյուրյուն ունեցող օրինական Հոգեոր Խշխանուրյունը և նոր Հոգեոր Խշխանուրյուն ստեղծել, որով պառակտել են պոլսարայ համայնքը և եկեղեցական Խշխանուրյունը, Գերազույն Հոգեոր Խորհուրդը, Վեհափառ Հայրապետի հանուրյամբ, հաստատում է Պատրիարքական Տեղապահի կախակայման կարգադրուրյունը ցեղ տեօրինուրյուն և լուծված համարում պաօրինի ընտրված նորաստեղծ իշխանուրյունը»:

Մենք սույն պատժով նպատակ ունեինք կախակայալների մեջ հառաջ թերել զգման զգացմունք, մետ կասեցնել նոցա իրենց քռեած փտանգավոր ու շար նաևապարհից և խաղաղացնել պալսահայ համայնքը: Սակայն կախակայալները ո՛չ միայն շենքարկվեցին Մեր հայրապետական կարգադրուրյան, շանսացին գուսպ մեալու Մեր հեռագրական հորդորին, չնարգեցին մեր ժողովրդի արժանապատվուրյունը և մեր եկեղեցու սրբուրյունը, այլև շարունակեցին կատարել իրենց հոգեոր պաշտոնները և նորանոր խժդուրյուններով ավելի վարկաբեցին իրենց Հոգեոր Խշխանուրյան և մեր հավատացյալ համայնքը՝ օտարենքի մոտ:

Նկատի առնելով, որ բարոյական ազդեցուրյան միջոցներով այլև հնարավոր չերջ դնել պալսահայ հուզումնալից վիճակին, որովհետև ըմբռատացումը հնաւանք չերջ եկեղեցին բարեկարգելու անկեղծ ցանկուրյան, ինչպես փորձում են արդարանալ կախակայալները Մեզ ուղարկած իրենց խմբական ու անհատական գրուրյուններով, այլ կանխամտածված և նախապատրաստված դիտավորուրյան, ապօրինի միջոցներով տապալելու Պատրիարքական Տեղապահին, Պալսի Հայոց Հոգեոր Խշխանուրյունը ձեռք ձգելու փառամոլ և հիվանդագին տենչանելով, իսկ այդ շնաշողվելու դեպքում, փորձել պառակտել Հայոց Առաքելական Ս. Եկեղեցին: Ուստի և Մենք որոշեցինք հարցը բազմակողմանի թենուրյան ենքարեկել, և որովհետև հնարավորուրյուն չընեիմք Ս. Էջմիածնից թենիշ հնանձնածողով ուղարկել, ուստի և հաճանաւարեցինք այն կատարելու Մեծի Տաճն Կիլիկիո Ծնորհազարդ Տ. Գարեգին Ս. Կարողիկոսին, որի ուղամտուրյան մասին ոչ ոք կարող է կասկածել:

Այժմ, երբ հնանուրյունը վերջացել է և Պալսահայ համայնքի պառակտման պատճանները պարզված են, Մենք, որպես Հայ միասնական եկեղեցու պիտ, հիմք ունենալով Մեծի Տաճն Կիլիկիո Տ. Գարեգին Ս. Կարողիկոսի նախագահուրյամբ կատարված թենուրյան արդարադատ եղրակացուրյունները, այլև նկատի առնելով Գերազույն Հոգեոր Խորհրդի գեկուցագիրն ու տեսակետները, ինչպես նաև կախակայալ հոգեւրականների խմբական ու անհատական գուրյունները, խղճի մասով ուսումնասիրելով Մեզ ներկայացված վերաբիշյալ բռուր փաստարդերը, հավատիացանք, որ՝

1. Կախակայալները, Տեղապահ Մրազանին վարկաբեկելու դիտավորուրյամբ, շրջիկ խոռոչար խմբակների միջոցով, քարունի և շուկայի են վերածել մեր նվիրական սրբազնութերը, գրեթ ամեն կյաւակի ցույցեր կազմակերպելով եկեղեցիներում, խաճարելով եկեղեցական սրբազն խորհուրդնե-

րը, արարողություններն ու ծեսերը, մոռանալով ձեռնադրության ժամանակի իրենց տված երդումը՝ Հայ նկեղեցու սրբազն խորհուրդները, ծեսերն ու արարողությունները երկյուղածությամբ ու սրբությամբ կատարելու մասին:

2. Կախակայալները փորձեր են արել դադարեցնել տակ Պատրիարքական Տեղապահի անվան հիշատակությունը եկեղեցիներում, Հոգեգպալատյան տոնեին: Ս. Երրորդության եկեղեցում, երբ պատարագի է Տեղապահ Մրագանը, շրջիկ խոռվարանները ցույց են կազմակերպել և, անվայի բարձուցներով, խաճգարել Ս. Պատարագը, տեղին տարով մեր ժողովրդի հեղինակությունը արատավորող վեճի և կովի:

3. Հակառակ Հայ նկեղեցու կանոնական սահմանումներին, որոնց հիման վերա և կազմված է Ազգային Սահմանադրությունը, վավերացված 1862 թվին Թյուրքական Պետության կողմից և նվիրագործված դաշնագրերով, կախակայալները փորձել են խախտել Հայ ժողովրդի և Հայ նկեղեցու պատմական իրավունքները. նոքա դիմել են Ամենապատիկ Տեղապահին, պահանջելով հրամակը եկեղեցական համագումար: Պատրիարքական Տեղապահը, ծանոթանալով եկեղեցական համագումարի օրակարգին, մերժել է նոցա պահանջը, հայտարարելով, որ նոցա առաջադրած հարցերը հակասում են Ազգային Սահմանադրությանը: Խոռվարանները, փոխանակ հնազանդելու Պատրիարքական հրամակին, մարտի 16-ին, «Թել էռ» պահելուում, ապօրինաբար, հրամիրել են իրենց համակիր եկեղեցականների ժողով և Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարքյանին ընտրել «Պատրիարքական Տեղապահ»:

4. Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանը, Պատրիարքական Տեղապահի հանգամանքով, ուռեակոխ անելով Հայ նկեղեցու Պետի միասնական իրավունքը, հանդես է եկել մամուկում մի հայտարարությամբ, որ իր Պետր Արքեպիսկոպոս Արաւանյանը ազատած է տեղապահական պաշտոնից:

5. Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանի հայագանությամբ ապօրինի բնարկություն կրոնական ժողովը հիսուս է գումարել և ըմբուների հոսանքը զարգնելու և պոլսահայ համայնքը պառակելու հպատակով, փորձել է մոլորության մեջ ձգել չկողմնորոշված քաղաքական գումարները:

6. Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանի հայագանությամբ ապօրինի բնարկություն կրոնական ժողովը հիսուս է գումարել և ըմբուների հոսանքը զարգնելու և պոլսահայ համայնքը պառակելու հպատակով, փորձել է մոլորության մեջ ձգել չկողմնորոշված քաղաքական մարմիններին:

7. Եվ, վերջապես, կախակայալ խմբի անդամներից ումանք, ուռեակոխ անելով հայ նոքեռորականի արժանապատվությունը, դիմել են բացահայտ մատնության: Այսպես, Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանը բյուրքական «Ենի Սապահ» բերրում հայտարարել է նետելությունը. «Մենք ապօրինի չենք շարժիր, մեր բած ամեն բանեն Կառավարությունը օրը-օրին լուր ունի: Մենք Կառավարության աեղեկությամբ կշարժինք: Անենիմն է այն պերումք թե Երևանին պատիծ տրված է մեզի, եթե նոյնիսկ արվի չենք անսար: Սուս է այն պերումք թե մենք ալ դիմում բած ենք Երևան և պատասխան չենք ստացած: Երևանի դիմել կենցանակե առ ոչինչ նկատել Թյուրք Կառավարությունը: Մենք այդպիսի վատություն չենք քններ: Անենք կշահագործեն եկեղեցական կապը»:

Հայ եկեղեցականի կողմից իր Հոգեւոր Խշանությունը, Մայր Արոռը հրապարակով գրպարտելու և մատնելու այս անարգ փառուր նախընքաց շունի Հայ նկեղեցու տարեգության մեջ: Թյուրք հանրային կարծիքին հանոյանա-

լու նպատակով, Մայր Աթոռի հասցեին ուղղված այս աճլուր ամբատաճանքը արդարացի զայրույր է առաջացրել ո՛չ միայն պոլսահայ համայնքներում, այլ ողջ հայուրյան մեջ:

Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանը, հայ համեստ և ուղղամիտ հոգեվորականի նկարագրին հակառակ, իր հիվանդութ փառախրությանը հագուրդ տալու տեհնով, դիմել է բացահայտ բաղաքական նենամաժետուրյան. նա փորձել է օգտագործել Պետուրյանների մեջ գոյություն ունեցող բաղաքական սրբածուրյունը և գրպարտել Մայր Աթոռը, որ առաջնորդվելով փրկչական պատվիրանով՝ «Տուի զիայսեր» կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ», Սփյուտի Թեմական Հզկոր Իշխանուրյանց ուղարկած իր բոլոր կոնդակներում անխափի հրամաննեցում է հեռու կանգնել բաղաքականուրյունից և հարգել տեղական իշխանուրյունը:

Նկատի ունենալով, որ Կոստանդնուպոլսի կախակայալ հոգնորականների վերոնիշյալ տասնամյա ընթացքի և գործունեության համառու նկարագիրը ոչ միայն ապացույց է նոցա եկեղեցական-կազմակուծչական և անշատողական աշխատանքների, պոլսահայ համայնքի և հոգնորականուրյան մեջ հառաջ բերելու պառակտողական ջանքերի, եկեղեցական կարգապահուրյան և եկեղեցական իշխանուրյան դեմ բմբոստացումների բաջալերման, Հայ եկեղեցու կանոնական իրավունքի և պատմուրյամբ նվիրագործված ու սրբագործված ավանդուրյունների ոտնահարման, եկեղեցական և ազգային զարավոր պատմական իրավունքների դավադիր վահառման և ծայրանեղ, մինչև դավանանուրյան հասած, գրպարտիչ մատնուրյան, այլև շարաշար մեղանշումն է Փրկչի Ավետարանի զայրակիդենելու վարդապետուրյան դեմ, որ ինքը Փրկչիը որոշում է որպես աններելի հանցանել, տակով. «Երէ ակն քո ազ զայրակիդեցանէ զինզ, խեազնա ի ընկեա ի բէն. զի լաւ է բեզ, երէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն մարմինն քո անկանիցի ի գենեն...» (Մատք. Ե, 29—30):

Ուստի և, աստվածային պատվիրանի և Մեր խոնի դեմ շմեղանչելու և Հայ եկեղեցին ու հայ համայնքները զայրակիդուրյան հջավակ շղարձնելու նպատակով, Մենք, որպես Հայ եկեղեցու Պետ և պահապան նորա դավանական, բարոյական և ծիսական սրբուրյունների, Մեր հայրապետական սույն կոնդակով հայտարարում ենք Մայր Հայրենիքի և Սփյուտի բովանդակ Հայուրյան, որ կարգալույծ ենք անում խոռվարանների պարագուիս հանդիսացող նետելալ երեք կախակայալներին՝ Հմայակ Մ. Վարդապետ Պախրիարյանին, Թովմա Ավագ Քահանա Շիկաներին, և Սահմակ Մ. Վարդապետ Պափազյանին, դասելով նոցա աշխարհականների շարքը և գրկելով Հայ եկեղեցուն անդամակցելու իրավունքից: Խոկ Զարմայր Մ. Վարդապետ Կեզյուրյանին, Արքահամ Ավագ Քահանա կայիշյանին և Մերովք Ավագ Քահանա Պուրմայանին, որպես գայրակիդաներ և հետեւրդներ, բողնում ենք կախակայման մեջ, պատիմք երկարացնելով մի տարի և այն հույսով, որ նոքա ի սրտե կզզան իրենց գործած հանցանեները և հոգով կերածնված, կարծանանան ներման:

Մենք լիովին հավատացած ենք, որ Մեր սիրեցյալ պոլսահայ համայնքը

և Մեր նոգեռականությունը, որպէս իրենց շրջանայեցությամբ, Եկեղեցասիրությամբ, ճախճաց, ավանդությունները անխախտ պահելու քծախնդրությամբ և Հայ ժողովրդի Սրբություն-Սրբոցի Մայր Արոռի հանդեպ իրենց տածած սիրով և հարգանքով օրինակելի ևն եղել բոլոր ժամանակներում, լիովին կգիտակցեն ներկա պատասխանառու շրջանում խռովարանների հանցավոր դիտավորությունը և իրեւ մի մարդ կնամախմբվեն իրենց Պատրիարքարանի շուրջը, բարձր պահելով մեր ազնիվ ժողովրդի բարոյական բարձր արժանիքները և Հայ Եկեղեցու կենսառու միասնականությունը:

Ներքի և ոգորմութիւն Տեան-մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ, ամէն:

Գեղագ Զե

ԾԱ.ՑՐՈ.ԳՈՒԹՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱ.ԹՈՂԻԿՈՍ  
Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կանգակա ի 25-է մայիսի 1950  
Փրկչական ամի և ի Տումարիս ՌՅԴԲ,  
ի վեցերորդ ամի Հայրապետության Մերոյ,  
ի Ս. ԷջՄԻԱԾԻՆ